



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 22 ՆՈՅԵՄԲԵՐ, 2010

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպուրթիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմասպուրթիւն պբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԸ՝ ԻՄ ՅՈՅՍԻ ԵՐԳՍ

*Յիշէ՛ խոստումդ, որ տուիր ինձի՝ քու ծառայիդ.
այն խոստումը, որուն վրայ դրի յոյսս:
Տառապանքիս մէջ սա՛ է միփթարանքս,
որ քու խօսքդ կեանք տուաւ ինձի:
Հակառակ ամբարտաւան մարդոց բուն ծաղրանքին,
ես Օրէնքդ չխոտորեցայ:
Անցեալին տուած վնիդներդ միշտ իմ մտքիս մէջ են, Տէր,
անոնցմով կը բաջալերուիմ:
Զայրոյթով կը լեցուիմ ամբարիշտներուն համար,
որոնք Օրէնքդ լքած են:
Այս պանդուխտ կեանքիս մէջ
կանոններդ են մշտական երգս:
Գիշերուան մէջ անունդ միշտ իմ մտքիս մէջ ունիմ, Տէր,
ես Օրէնքդ մասին կը խորհիմ:
Կեանքի մէջ այս է բաժինս.-
Հրահանգներուդ հնազանդիլ:*

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:
ՅՄՅ*

ԱՂՈԹՔ

Սորվեցո՛ւր մեզի, ո՛վ Տէր,
որ տեսնեմք եւ օգտագործեմք
ծառայութեան ամէն պատեհութիւն.
տանք՝ առանց փոխարժէքը հաշուելու,
պայքարինք՝ առանց վիրաւորուելու,
աշխատանք՝ առանց հանգիստ փնտոելու,
ծառայեմք՝ առանց վարձատրութիւն ակնկալելու.
այն գիտակցութեամբ՝ թէ քու կամքդ է որ կը կատարեմք:
Ամէն:

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹ

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
Գլխ. 3

Յովհաննես Մկրտիչի Քարոզությունը
եւ Յիսուսի Մկրտությունը

Յովհաննես Մկրտիչ

1. Յիսուսի նախքան յայտնուիլը պէտք է որ դեսպանը յայտնուի
2. Անապապին մէջ աղաղակողին ձայնը (ազդարարող)
3. Մարգարէ (Հագուստը Ուղտի մազ, իսկ կերակուրը՝ մարախ եւ վայրի մեղր):
4. Եղիա մարգարէին նկարագրային գիծերը ունեցող, անոր հոգին, զօրութիւնը եւ նախանձախնդրութիւնը:

Յովհաննես Մկրտիչի մկրտությունը

1. Զուրի մկրտութիւն, լուսցում, ապաշխարութեան խորհրդանիշ:
2. Ապաշխարութիւնը նախապայման երկինքի արքայութեան:

Յովհաննես Մկրտիչի քարոզությունը

1. Մարգարէական ոճով, ազդարարութիւն ուղղուած ժողովուրդին, եւ այս պարագային ղեկավար դասուն՝ Փարիսեցիներուն, Սադուկեցիներուն:
2. Բարկութեան ազդարարութիւն՝ Դաւրաստան: Այդ Դաւրաստանը որեւէ մէկ ժամանակ կրնայ գայ:
3. Վերահաս կամ շուրջով գալու այս հասկացողութիւնը, որպէս միշտ պատրաստ վիճակի մէջ ըլլայ մարդը եւ այդ ակնկալութեամբ:
4. Դաւրաստանի կամ պարիժը նպատակը:
5. Իժերու ծնունդ, նկարի ունի առաջին Չարը, Օձը՝ Սաւանան: Այլ խօսքով՝ Չարին, Սաւանային որդիները:
6. Աբրահամի զաւակն ըլլալը բաւարար չէ, այլ ապաշխարութեան արժանի պտուղ բերել: Ապաշխարութիւնը գործով արտայայտելու եւ մնայուն ընթացք ունենալու է:
7. Կացինը ծառերը կտրելու եւ չմարող կրակին մէջ նետելու: Տառապանքի, չարչարանքի յաւերժական վիճակ:
8. Ես ջուրով կը մկրտեմ, իսկ ան որ ինձմէ ետք պիտի գայ, որ Ս. Հոգիով եւ կրակով պիտի մկրտէ: Յովհաննեսի մկրտութիւնը նշան ապաշխարութեան:

Եզրակացություն

Յովհաննես Մկրտիչի քարոզութիւնը իրականին մէջ մէկ պատգամ ունի ապաշխարութեան հրաւիրել իր ժամանակի ժողովուրդը, ըսելու, որ Աստուծոյ քով արդարանալու միակ կերպ մը կայ. մարդկային մեր կապերը, ժառանգականութիւնը, արեան կապը, այս պարագային նոյնիսկ հաւատքի հօր՝ Աբրահամի հետ, երբեք մարդս չեն կրնար արդարացնել Աստուծոյ առջեւ: Իւրաքանչիւրը անհատ պատասխանատուութիւն մը ունի, հետեւաբար իւրաքանչիւր ինքն է որ իր յանցանքներով կը դատապարտուի կամ իր գործերով կ'արդարանայ Աստուծոյ աչքին:

Երկրորդ բաժնով մը այս անգամ վկայութիւն մը կու տայ Մեսիային մասին. «Ես, ձեզի միայն ջուրով է որ կը մկրտեն, իմ մկրտութիւնս վկայութիւն մըն է, որովհետեւ այդ մկրտութիւնը ինքնին փրկութիւն չի բերեր»: Նախապատրաստութիւն մըն է այն աւելի կարեւոր մկրտութեան, որ ինձմէ ետք եկողը պիտի տայ: